ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏՆ ԸՆԴԴԵՄ ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԴԱՆԻԵԼՅԱՆ Է. Լ.

Հայաստանի պատմաքաղաքակրթական ամբողջականությունը տեղաբնիկ հայ ժողովրդի կենսագործունեության՝ հոգևոր ու նյութական մշակույթով վավերացված իրողություն է: Հայկական լեռնաշխարհի (400,000 կմ²) բնապատմական միջավայրում հայ ժողովրդի գործունեությամբ կերտված Հայոց ավելի քան հինգհազարամյա պետականության ու քաղաքակրթական արժեքների էթնոհոգևոր, քաղաքական և մշակութային պատմությունը վկայված է հնագիտական, սեպագիր, անտիկ և միջնադարյան գրավոր սկզբնաղբյուրներով ու պատմական հուշարձաններով:

Հայաստանի տարածքային ամբողջականության արտահայտություններից է բնիկ հայկական տեղանունների համակարգը: Հայաստանն իր բնական միջավայրով հոգևոր պատմության մեջ հայտնի է որպես «սուրբ ծեսերի կամ օրենքների երկիր Արատտա»[1] և լերինք Արարատայ[2] (Արարատ-Մասիս բարձրագույն գագաթով), որը նույնական է հին հունական և վաղմիջնադարյան հայկական սկզբնաղբյուրներում՝ Հայկական լեռներ[3] և լերինք Հայոց[4], ու գիտական գրականության մեջ հիշատակվող Հայկական լեռնաշխարհ[5] անվանումներին: Հայկական էթնոաշխարհագրական

---

[1] *Մ.թ.ա. III հազարամյակի շումերական հերոսապատում-պոեմում հիշատակվող Արատտայի (***Kramer S. N.** *Enmerkar and the Lord of Aratta: a Summerian Epic Tale of Iraq and Iran, Philadelphia, 1952) տեղադրությունը Լ. Պետրոսյանն առաջարկել է Հայկական լեռնաշխարհում: Արատտա անվանումը նա համեմատել է Արարատ (Ուրարտու) անվանման հետ [***Պետրոսյան Լ.***, Հայ ժողովրդի փոխադրամիջոցներ (Հայ ազգաբանություն և բանահյուսություն, ժողովածու, 6, Ե., 1974, էջ 123), հմմտ.* **Kavoukjian M.** *Armenia, Subartu and Sumer. The Indo-European Homeland and Ancient Mesopotamia, Montreal, 1987, pp. 68-70,* **Մովսիսյան Ա.,** *Հնագույն պետությունը Հայաստանում, Արատտա, Ե., 1992, էջ 29-32]:*

[2] *Գիրք Աստուածաշունչք Հին եւ Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1860, Ծնն., Ը. 4:*

[3] **Herodotus,** *with an English translation by A. D. Godley, in four volumes, vol. I, London, 1920, I 72, 2; The Geography of* **Strabo,** *with an English translation by H. L. Jones, in eight volumes, I, London, 1960, XI, 14, 12;* **Josephus** *with an English translation by H, St. J. Thackeray, in nine volumes, I, Contra Apionem, London, 1961, I. (19), 131.*

[4] **Ղազար Փարպեցի,** *Պատմութիւն Հայոց, Ե., 1982, էջ 320:*

[5] *Գերմանացի երկրաբան, ակադեմիկոս Հերման Աբիխը (1806-1886) իր աշխատություններում Das Armenische Hochland կամ Bergland տերմինով է բնութագրել Հայաստանի ֆիզիկաաշխարհագրական, երկրաբանական և գեոմորֆոլոգիական*

անվանումների և տեղանունների ամբողջական համակարգը բնութագրում է Հայաստանի (Արևմտյան և Արևելյան Հայաստան)՝ հայ ժողովրդի Հայրենիքի բնապատմական միջավայրը և սոցիալքաղաքական ու մշակութային պատմությունը: Հայկական լեռնաշխարհի պատմաաշխարհագրական տերմինաբանությունը, ներառելով Հայաստանի տեղանունների ամբողջականությունը, պատկանում է հայ ազգային լեզվամտածողության հիմնաշերտին:

Հայաստանը հազարամյակների ընթացքում արգասավորված քաղաքակրթական արժեհամակարգով՝ գոյաբանական աշխարհընկալմամբ, հարատևող ամբողջություն է[6]:

Հայաստան-Արմենիան պատմական սկզբնաղբյուրներում վկայ-ված է Հայկազունների գլխավորած[7] Արատտա, Արմանի/Արմանում[8], Հայասա[9],

---

*պատկերը [**Абих Г.** Геология Армянского нагорья. Западная часть (Сообщения Кавказского отдела Имперского Российского географического общества, т. XXI, 1899), Восточная часть (т. XXIII, 1902)]:*

[6] **Դանիելյան Է. Լ., Թաիրյան Վ. Ի.,** *Հայոց պատմական ժառանգության պաշտպանության գործը և անվտանգ տեղեկատվական արդի միջոցները (Հայկական լեռնաշխարհը Հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան, Ե., 2004, էջ 6-12),* **Դանիելյան Է. Լ.,** *Հայոց պատմական և քաղաքակրթական արժեհամակարգի պաշտպանության անհրաժեշտությունը [(ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ Լրաբեր), 2010, N 3, էջ 53-74)],* **նույնի՝** *Importance of the Armenian Toponyms' Ontological Integrity in the System of National Security (21st Century, N 2, 2013, pp. 78-101).*

[7] *Հայկազունների գործունեության մասին Մովսես Խորենացու (V դ.) (***Մովսէս Խորենացի,** *Պատմութիւն Հայոց, Ե., 1991, էջ 38-39, 63-64) հաղորդումները հաստատվում են պատմագիտության մեջ (***Ալիշան Ղ.,** *Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1869, էջ 79-81, 94-96,* **Խանզադյան Է.,** *Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Ե., 1967,* **Мартиросян А. А.** *Аргиштихинили, Е., 1974,* **Ավետիսյան Պ., Գասպարյան Բ.,** *Ագարակի հուշարձանախմբի 2001 թ. պեղումները (Հին Հայաստանի մշակույթը, XII, Ե., 2002, էջ 9-12),* **Оганесян В. Э. Серебряный кубок из Карашамба** *[Պատմաբանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1988, N 4, էջ 145-161],* **Սիմոնյան Հ.,** *Վերին Նավեր, գիրք Ա, Ե., 2006,* **նույնի՝** *Ներքին Նավերի N 4 դամբարանը (Հուշարձան, տարեգիրք, 5, Ե., 2010, էջ 7-20),* **Խաչատրյան Ժ.,** *Մեծն Արտաշես Առաջինը Հայոց պատմության էջերում (ՊԲՀ, 2012, N 1, էջ 3-13),* **նույնի՝** *Արտաշատ մայրաքաղաքի վերջին տարիների պեղումների արդյունքները (ՊԲՀ, 2013, N 3, էջ 179-198) և այլն:*

[8] **Кифишин А.** *Географические воззрения древних шумеров при патеси Гудеа (2162-2137 гг. до н. э.), Палестинский сб., вып. 13 (76), 1965, с. 64;* **Иванов Вяч. Вс.** *Выделение разных хронологических слоев в древне-армянском и проблема первоначальной структуры гимна Вахагну (ՊԲՀ, 1983, N 4, էջ 32-33) և այլն:*

[9] **Մարտիրոսեան Ն.,** *Հայերէնի յարաբերութիւնը հեթիդերէնի հետ (Հանդէս ամսօրեայ, 1924, N 9-10, էջ 453),* **նույնի՝** *Նպաստ մը հեթ և հայ բառաքննության (ՊԲՀ, 1972, N 2, էջ 163-186),* **Капанцян Гр.** *Хайаса – колыбель армян. Этногенез армян и их начальная история, Е., 1956,* **Խաչատրյան Վ.,** *Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Ե., 1998,* **Ղազարյան Ռ.,** *Հայասայի քաղաքական և մշակութային պատմությունը, Ե., 2009:*

Նաիրի, Արարատ (Ուրարտու)-Բիայնա (Վան), Արմինա[10], Մեծ Հայք և Փոքր Հայք թագավորությունների անուններով[11]: Պատմական սկզբնաղբյուրների տվյալները վկայում են Հայկական լեռնաշխարհում Հայոց հոգևոր և քաղաքակրթական խոր արմատների ու բարձր որակների մասին, որոնց գագաթնակետերից էին Հայոց տերության Արգիշտի Ի-ի (մ.թ.ա. 786-764 թթ.) և Արտաշես Ի-ի (մ.թ.ա. 189-160 թթ.) ու, հատկապես, նրա թոռան՝ աշխարհակալ արքայից արքա Տիգրան Բ Մեծի (մ.թ.ա. 95-55 թթ.) ժամանակները[12]:

Դ. Լանգը, բարձր գնահատելով Հայաստանի քաղաքակրթական նշանակությունը, գրել է. «Հնագույն երկիր Հայաստանը տեղադրված է բարձր լեռներում... Թեև Միջագետքն իր հնագույն՝ Շումերի և Բաբելոնի քաղաքակրթություններով, Եգիպտոսի հետ մեկտեղ, սովորաբար համարվում է քաղաքակրթական կյանքի հիմնական աղբյուրը... Հայաստանը նույնպես կարող է որակվել որպես մարդկային մշակույթի օրրաններից մեկը: Նախ, ինչպես Ծննդոց գրքում է ասվում, Նոյի տապանը կանգ է առել Արարատ լեռան գագաթին, Հայաստանի հենց կենտրոնում... Բացի այդ, Հայաստանը մեր ուշադրությունն է պահանջում որպես հնագույն մետաղագործության հիմնական օջախներից մեկը, որը սկիզբ է առնում, առնվազն, հինգ հազար տարի առաջ: Ավելի ուշ Հայաստանը դարձավ քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունած առաջին մեծ թագավորությունը՝ հանդիսանալով եկեղեցական ճարտարապետության այն ոճի սկզբնավորողը, որը մեր սեփական՝ արևմտյան գոթիկայի կանխագործումն էր»[13]:

Ի դարը Հայոց Արգար թագավորի[14] պատմական առաքելության և Հայաստանում վկայված լուսապաշտական ակունքներից ընձյուղվող քրիստոնեական հավատքով Հայ Առաքելական Եկեղեցու հաստատման

---

[10] **Lecoq P.** *Les inscriptions de la Perse achéménide, Gallimard, 1997, pp. 139, 246.*

[11] **Դանիելյան Է. Լ.,** *Հին Հայաստանի պատմության հայեցակարգային հիմնահարցերը պատմագրության մեջ (ՊԲՀ, 2003, N 3, էջ 30-37):*

[12] **Մանանդյան Հ.,** *Տիգրան Երկրորդը և Հռոմը, Ե., 1940, էջ 54-55,* **Սարգսյան Գ. Խ.,** *Հայկական տերությունը, նրա տեղն ու դերը Առաջավոր Ասիայում (Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Ե., 1971, էջ 565-573),* **Մանասերյան Ռ. Լ.,** *Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, Ե., 1987, էջ 58-103,* **Դանիելյան Է. Լ.,** *Տիգրան Մեծի քաղաքակրթական գործունեության ռազմավարությունը(ՊԲՀ,2006, N 2, էջ 3-12):*

[13] **Lang D. M.** *Armenia: Cradle of Civilization, London, 1970, p. 9.*

[14] **Մովսէս Խորենացի,** *էջ 142-156: Անանուն Եդեսացին նույնպես նշել է Ուռհայում գահակալած Արգար V-ի (մ.թ.ա. 4 - մ.թ. 7 թթ., մ.թ. 13-50 թթ.) հայկական ծագման մասին [տե՛ս* **Անանուն Եդեսացի,** *Ժամանակագրություն, թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Լ. Տեր-Պետրոսյանի (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 12, Ասորական աղբյուրներ, Բ, Ե., 1982, էջ 195-196), տե՛ս նաև* **Դանիելյան Է. Լ.,** *Ս. Թադեոս առաքյալի ավանդության արտացոլումը հայ պատմագիտության մեջ (Հայաստանը և քրիստոնյա Արևելքը, Ե., 2000, էջ 49-54)]:*

ժամանակաշրջանն էր: Հռոմեական կայսրության նվաճողական քաղաքականությանը դիմակայելու պայմաններում Հայոց ուժերի՝ պարթևների հետ դաշնակցությամբ երկրի անկախության համար մղած պայքարի շնորհիվ պարթևական թագավոր Վաղարշ I Արշակունու եղբայրը՝ Տրդատ I-ը (65-88 թթ.), Մեծ Հայքի գահին բարձրացավ, և Արշակունիների այս ճյուղը հարյուր տարի անց Հայոց արքաներ Վաղարշ II-ի (185-198 թթ.) և նրա որդու՝ Խոսրով I-ի (198-215 թթ.) օրոք դարձավ հայկական ժառանգական հարստություն: Քրիստոնեությունն աշխարհում առաջինը Հայաստանում հռչակվելով որպես պետական կրոն (301 թ.) և Մեսրոպ Մաշտոցի՝ հայ գրերի գյուտով (405 թ.) ու դրան հաջորդած Ոսկեդարյան գրական ժառանգությամբ հայ ժողովուրդը հարստացրեց հազարամյակների պատմություն ունեցող իր ազգային՝ հոգևոր-մշակութային գանձարանը[15]:

Սասանյան Պարսկաստանի ու Արևելահռոմեական կայսրության (Բյուզանդիա) նվաճողական քաղաքականության հետևանքով Հայաստանի բաժանումից (385/7 թթ.) և հայ Արշակունյաց հարստության անկումից հետո (428 թ.), ըստ Եղիշեի՝«ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւն»[16], այսինքն, պետականության կրողը Հայաստանում մնում էր Հայոց նախարարական համակարգը[17]: Վարդան Մամիկոնյանի (450-451 թթ.)[18], այնուհետև Վահան Մամիկոնյանի (481-484 թթ.) ղեկավարած հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ բարձրացան Մամիկոնյանների գլխավորած Տանուտերական իշխանապետությունը[19], ինչպես նաև Հայկազուն-Սիսակյան-Առանյան Վաչագան Բարեպաշտի թագավորությունը (484 թ. - VI դ. առաջին կես) Հայոց Արևելից կողմերում՝ Արցախում, Ուտիքում և հարակից տարածքներում[20]:

---

[15] **Դանիելյան Է. Լ.,** *Հայ գրի, թարգմանական և ինքնուրույն գրականության պատմական նշանակությունը քաղաքակրթությունների երկխոսության տեսանկյունից (21-րդ դար, 2010, N 1, էջ 13-24):*

[16] **Եղիշէի,** *Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ե., 1957, էջ 6:*

[17] **Դանիելյան Է. Լ.,** *Հին Հայոց պետականության գաղափարական ընկալումը վաղմիջնադարյան հայկական աղբյուրներում (Հարք, Ե., 2006, N 1, էջ 18-31):*

[18] *Ապստամբական շարժումը սկսվել էր 449 թ. (***Ելիշէ.** *О Вардане и войне армянской, перевод с древнеармянского акад. И. А. Орбели. Подготовка к изданию, предисловие и примечания К. Н. Юзбашяна, Е., 1971, с. 10, 13).*

[19] *Ըստ Ղազար Փարպեցու (V դ.)՝ «զտէրութիւն Մամիկոնենից և զպարապետութիւնն Հայոց» (***Ղազար Փարպեցի,** *էջ 424), ըստ Սեբեոսի (VII դ.)՝ «զաշխարհն Տանուտերական իշխանութեանն» (Պատմութիւն* **Սեբէոսի,** *Ե., 1979, էջ 76):*

[20] **Մովսէս Կաղանկատուացի,** *Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ե., 1983, էջ 51-53,* **Ուլուբաբյան Բ. Ա.,** *Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության (V-VII դդ.), Ե., 1961, էջ 31,* **նույնի՝** *Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Ե., 1998, էջ 64-65,* **Դանիէլեան Է. Լ.,** *Գանձասարի պատմութիւն, Ե., 2005, էջ 46,* **նույնի՝** *Մովսես Խորենացու*

VII դ. 40-ական թթ. Արաբական խալիֆայության զորքերի ներխուժումների դեմ հայ ժողովրդի մղած կռիվները և Հայոց անկախ ամբողջական իշխանապետության վերականգնումը (VII դ. կեսեր-680-ական թթ.)[21], ինչպես նաև VIII-IX դդ. հակախալիֆական ապստամբությունները հայ ժողովրդի ազատագրական պայքարի արտահայտություններն էին: Հայոց Բագրատունյաց (885-1045 թթ.), Վասպուրականի Արծրունիների (908-1021 թթ.), Կարս-Վանանդի (963-1065 թթ.), Տաշիր-Զորագետի Կյուրիկյանների (966-1113 թթ.), Սյունիքի (970-1170 թթ.), Փառիսոսի (Xդ. կես-1044 թ.) թագավորությունների, Արցախի՝ Խաչենի իշխանության (X-XVI դդ.), Զաքարյանների իշխանապետության (XII դ. վերջ-XIII դ. առաջին կես), Կիլիկիայում Հայկական իշխանապետության (1080-1197 թթ.) ու թագավորության (1198-1375 թթ.) օրոք Հայոց քաղաքակրթական արժեհամակարգը հարստացավ մշակութային նոր արժեքներով[22]: Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Շարլ Դիլը համաշխարհային ճարտարապետության գլուխգործոցների շարքում հայ ճարտարապետական արվեստի բազում բարձրարվեստ հուշարձաններից հինգ լավագույնները համարել է Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին, Ս. Հռիփսիմեի տաճարը, Գանձասարի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, Հաղբատի վանքը և Անիի Մայր եկեղեցին[23]:

Հետագա դարերում Հայրենիքի պաշտպանության պատվարներ շարունակեցին մնալ Սյունիքը, Արցախը[24], Տարոն-Սասունը, Բարձր Հայքը, Զեյթունը, Վանը և հայկական ինքնապաշտպանական մյուս շրջանները և ամրությունները:

ավանդագրույցի Միսակ-Առանյան ճյուղի «նորագույն քննադատության» սնանկությունը (ՊԲՀ, 2008, N 2, էջ 186):

[21] **Тер-Гевондян А.** *Армения и Арабский халифат, Е., 1977, с. 50-56, 71-74,* **Դանիելյան Է. Լ.,** *Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Ե., 2000, էջ 225-226:*

[22] **Թորամանյան Թ.,** *Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1 , 2, Ե., 1942, 1948,* **Орбели И. А.** *Памятники армянского зодчества на острове Ахтамар (Избранные труды, т. I, М., 1960),* **Ալիշան Ղ.,** *Միսուան, Վենետիկ, 1885:* **Strzygowski J.** *Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918;* **Токарский Н. М.** *Архитектура Армении IV-XIV вв., Е., 1961;* **Дурново Л. А.** *Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979;* **Измайлова Т. А.** *Армянская миниатюра XI в., М., 1979;* **Հասրաթյան Մ. Մ.,** *Ամարասի ճարտարապետական համալիրը (Լրաբեր, 1975, N 5, էջ 35-52),* **Այվազյան Ա. Ա.,** *Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանները, Ե., 1978,* **Քոթանջյան Ն.,** *Էջմիածնի Ավետարանը, Ե., 2000,* **Драмбян И. Р.** *Торос Рослин, Е., 2000,* **Հարությունյան Վ. Ս.,** *Հայկական ճարտարապետության պատմություն, Ե., 1992,* **Ուլուբաբյան Բ., Հասրաթյան Մ.,** *Դաղիվանք (Հայկազյան հայագիտական հանդես, հ. Ը, Բեյրութ, 1980, էջ 7-54):* **Դանիելյան Է. Լ.,** *Գանձասարի վանքը, Ե., 2009 և այլն:*

[23] *Տե՛ս* **Թորամանյան Թ.,** *Հայկական ճարտարապետության փոխազդեցության շուրջը (Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, էջ 25):*

[24] **Ռաֆֆի,** *Խամսայի մելիքությունները (Երկերի ժողովածու, հ. 9, Ե., 1987):*

Ծանր էին սելջուկ-թյուրքերի, թաթար-մոնղոլների ներխուժում-ների, այնուհետև՝ թուրք-պարսկական պատերազմների ու բաժանումների (1555, 1639 թթ.) հետևանքները: Պատմության դժնդակ ժամանաներում Հայ Առաքելական եկեղեցուն էր վերապահված՝ մեծ ջանքեր գործադրելով, իր նվիրապետական կառուցվածքով, հնարավորինս պահպանել Հայաստանի բաժանված մասերն ազգային և եկեղեցական-թեմական միասնության մեջ:

Օսմանյան զավթողական քաղաքականությունը իրականացվում էր Արևմտյան Հայաստանի [Մեծ Հայքի արևմտյան մաս, Փոքր Հայք և Հայոց (Հյուսիսային) Միջագետք] և Կիլիկյան Հայաստանի վարչաքաղաքական մասնատումներով, հայ բնակչության դեմ գործադրվող բռնաճնշումներով ու կոտորածներով, պատմական տեղանունների փոփոխմամբ ու աղճատմամբ՝ որպես պան-թուրքիզմի վայրենի գաղափարախոսության վրա հիմնված օտար բռնակալական քաղաքականության դրսևորումներ[25]: Ժամանակի ընթացքում այն վերածվեց ցեղասպանության ծրագրի[26] ընդդեմ բնիկ հայ բնակչության: XIX դ. վերջին տասնամյակներից Օսմանյան կայսրությունում արգելվեց «Հայաստան» անվան օգտագործումը, և դաժան ընթացք ստացան հայերի զանգվածային ջարդերը[27]:

1894-1923 թթ. Օսմանյան կայսրությունում սկսվեց և երիտթուրքերի ու քեմալականների կողմից Արևմտյան Հայաստանում, Կիլիկյան Հայաստանում, ինպես նաև Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում ծրագրված կերպով իրագործվեց Հայոց ցեղասպանությունը: Թուրքական զորքերը, ներխուժելով Արևելյան Հայաստանի որոշ շրջաններ, ինչպես նաև Կուրի ձախափնյակ և Մերձկասպյան շրջաններ, հասան մինչև Բաքու և, շարունակելով իրենց հանցավոր գործողությունները [մուսավաթականների (1918 թ. երկրորդ կեսից - 1920 թ.) մասնակցությամբ][28], այս տարածքներում

---

[25] **Դանիելյան Է. Լ.,** *«Քարտեզագրական պատերազմը» և Հայոց տեղանուն-ների պաշտպանության հիմնախնդիրը (http://blog.ararat-center.org/?p=160),* **նույնի՝** *Հայկական տեղանունների պաշտպանության հիմնախնդիրը տեղեկատվական պատերազմի քարտեզագրական ոլորտում (Տեղեկատվական ան վտանգություն, 2008, N 3, էջ 13-15),* **նույնի՝** *Հայաստանն ու հայկական տեղանունները. Հայոց բնապատմական միջավայրի պաշտպանության գիտական առաջադրանքը (ՎԷմ, 2009, N 1, էջ 9-25),* **Սահակյան Լ.,** *Հայկական տեղանունների թուրքացման քաղաքականությունը Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում (ՎԷմ, 2010, N 1, էջ 83-96),* **Sahakyan L.** *Turkification of the Toponyms in the Ottoman Empire and the Republic of Turkey, Montreal, 2010.*

[26] *Տե՛ս* **Safrastyan R.** *Ottoman Empire: the Genesis of the Program of Genocide (1876-1920), Yerevan, 2011.*

[27] *Հայոց պատմություն, հ. III, գիրք Ա, Ե., 2010, էջ 459:*

[28] **Աբրահամյան Հ.,** *Արցախահայության հասարակական-քաղաքական կյանքը և Արցախի թեմը (1901-1933), Ս. Էջմիածին, 2009, էջ 179-199:*

բնակվող տեղաբնակ հայերի դեմ նույնպես իրագործեցին ցեղասպանություն[29]:

1916 թ. հունվարի 5-ին ի շարունակություն ցեղասպանության ռազմական նախարար Էնվեր փաշան օսմանյան ռազմաքաղաքական իշխանություններից պահանջեց Օսմանյան կայսրությունում հայերեն, հունարեն, բուլղարերեն և այլ ոչ-մահմեդական ծագումով բոլոր տեղանունները փոխել թուրքերենի[30]: Յուրաքանչյուր հայկական տեղանվան ոչնչացումը նշանակում էր թուրք հանցավոր իշխանությունների իրականացրած՝ հայկական բնակչության բռնագաղթ և բնաջնջում հայերի հայրենի հողում, ինչպես նաև պատմական հիշողության ջնջում: Քաղաքակրթության ոչնչացումը թուրքական ավազակապետության (վայրենի՝ քոչվոր հիմքի վրա ստեղծված Օսմանյան կայսրությունը[31], այնուհետև՝ երիտթուրքերի վարչակարգը, ինչպես նաև հանրապետական Թուրքիան) ցեղասպան քաղաքականության անբաժան մասն է:

Հայտնի փաստ է, որ Հայոց ցեղասպանության ընթացքում Թուրքիան՝ որպես մարդկության և քաղաքակրթության դեմ հանցագործություններ կատարող, մեղադրվեց Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի ընդունած համատեղ Հայտարարությամբ (1915 թ. մայիսի 24)[32], որը թուրք իշխանությունների ցեղասպան հանցագործությունը դատապարտող միջազգային իրավունքի առաջին փաստաթուղթն է[33]: Համատեղ

---

[29] **Ստեփանյան Գ.,** *Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Ե., 2011,* **Manasyan A. S.** *The Turkish Unpunished Crime of Genocide Against the Armenians – the Suicide Road of Mankind (Fundamental Armenology, http://www.fundamentalarmenology.am/ issues/8/ISSUE-1-2015.html).*

[30] **Սահակյան Լ.,** *Տեղանունների թուրքացումն Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում, Մոնրեալ, 2010, էջ 33-34:*

[31] *XIX դարում թուրքի կերպարի մասին ձևավորված պատկերը՝ սուլթան Աբդուլ Ազիզ I-ի (1861-1876 թթ.)օրինակով տվել է Մարկ Տվենը (1835-1910 թթ.). «Աբդուլ Ազիզը բնությամբ և դաստիարակությամբ ստոր, գազանային, տգետ, հետադիմող, սնոտիամոլ մի ժողովրդի՝ ...բռնակալության, անկշտության և արյան մի կառավարության ներկայացուցիչ է»* (**Mark Twain,** *The Innocents Abroad or the New Pilgrims' Progress, New York, 1964, p. 75):*

[32] *"...En prnsence de ces nouveaux crimes de la Turquie contre l'humanitn et la civilisation…"* [**Beylerian A.** *Les grandes puissances, l'empire ottoman et les Armnniens dans les archives fran9aises (1914-1918): recueil de documents, Paris 1983, p. XLIII & document N 41; PRO, FO 371/2488/51010, 28 May 1915; History of the United Nations War Crimes Commission and the Development of the Laws of War. London, 1948,* **Shabas W. A.** *Genocide in International Law, Cambridge, 2000, p. 16]. Հայտարարությունում հատուկ նշվել է «նոր հանցագործություններ» արտահայտությունը, քանի որ աշխարհում հայտնի էին հայերի դեմ XIXդ. երկրորդ կեսից և XX դ. առաջին տասնամյակներին թուրքերի ցեղասպան գործողությունները:*

[33] *Փարիզի խաղաղության վեհաժողովի՝ «Պատերազմի հեղինակների պատասխանատվության և պատերազմի օրենքների խախտումների համար պատիժների*

Հայտարարությունը մեծագույնս ազդեց Սևրի պայմանագրի վրա (1920 թ. օգոստոսի 10)[34] և պահպանում է իր իրավական ուժը[35]:

Ժողովուրդների մշտական տրիբունալի (Փարիզ, 1984 թ. ապրիլի 13-16) դատավճռում սահմանվել է՝ «Հայկական բնակչությունը եղել և կազմում է մի ժողովուրդ, որի հիմնարար իրավունքները՝ թե՛ անհատական և թե՛ կոլեկտիվ, պետք է հարգվեին և պետք է հարգվեն միջազգային օրենքի համաձայն: Հայ բնակչության խմբերի բնաջնջումը՝ բռնագաղթի և կոտորածի միջոցով, ցեղասպանության հանցագործություն է... Երիտթուրքերի կառավարությունն այս ցեղասպանության հանցագործն է՝ 1915-1917 թթ. միջև կատարված գործողությունների առումով...»[36]:

Երկու տասնյակից ավելի երկրներ ու բազմաթիվ միջազգային կազմակերպություններ արդեն ճանաչել և դատապարտել են Հայոց ցեղասպանությունը: Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործում համաշխարհային առանձնակի հնչեղություն ունի 2015 թ. ապրիլի 12-ին Հռոմի Պապ Ֆրանցիսկ I-ի մատուցած պատարագը

պարտադրման հանձնաժողովը» իր եզրափակիչ զեկույցում կրկնել է այդ Հայտարարության երկու սկզբունքները՝ (ա) քրեական պատասխանատվության ենթարկելը՝ «առանց հաշվի առնելու աստիճանը, ներառյալ պետության ղեկավարներին», (բ) «մարդկության օրենքների» դեմ գործած հանցագործությունների մեջ մեղավոր Կենտրոնական տերությունների հետ հիշատակվում էր Թուրքիան (տե՛ս **Cherif Bassiouni M.** *Crimes Against Humanity in International Criminal Law, Boston, 1992, p. 165-167, 170, n. 78, p. 173, n. 88): Դեռևս 1919 թ. հունիսի 23-ին վեհաժողովի գերագույն խորհրդի կողմից թուրքական պատվիրակությանը ներկայացված պաշտոնական փաստաթղթում դաշնակից տերությունները փաստում էին, որ քրիստոնյա հայերի կոտորածն իրագործվել է թուրքական կառավարության հրամանով (Documents on British Foreign Policy 1919-1939, 1st Series, London, 1952, vol. 4, p. 647): Սակայն Վերսալի պայմա-նագրում (1919 թ. հունիսի 28) ընդգրկվեցին միայն՝գերմանական նախկին կայսր Վիլհելմ II-ի և գերմանական պաշտոնյաների նկատմամբ պատերազմի հանցանքների մեղադրանքով պատիժ սահմանող 227-րդ և 228-րդ հոդվածները, ինչպես նաև 231-րդ հոդվածը, որի համաձայն՝ Գերմանիան ընդունում էր իր և իր դաշնակիցների (որոնցից էր նաև Թուրքիան) պատասխանատվությունն այն բոլոր կորուստների ու վնասների համար, որոնք նրանք Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում պատճառել էին Անտանտի կոալիցիայի դաշնակից և նրանց միացած պետություններին ու նրանց քաղաքացիներին(PeaceTreatyofVersailleshttp://wwi.lib.byu.edu/index.php/Peace_Treaty_of_Versailles):*

[34] *The Treaties of Peace 1919-1923, vol. II, Carnegie Endowment for International Peace, New York, 1924. Ինչպես նշել է Մ. Բասսիունին, «Սևրի պայմանագրի կողմերը նպատակ ունեին պատասխանատվության ենթարկել նրանց, ովքեր «մարդկության դեմ հանցագործություններ» էին կատարել» (*Bassiouni Ch. M., *op. cit., p 174):*

[35] **Մարուքյան Ա.,** *Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, Ե., 2014, էջ 81-84:*

[36] *A Crime of Silence, The Armenian Genocide, Permanent Peoples' Tribunal. London, 1985, p. 227.* **Ներսիսյան Մ., Խառատյան Ա.,** *Միջազգային հասարակական կարծիքը արևմտահայության ցեղասպանության մասին (ՊԲՀ, 1986, N 1, էջ 71-84):*

Վատիկանում ի հիշատակ 1,5 միլիոն անմեղ զոհերի, որոնց սրբադասումը կատարեց Հայ Առաքելական եկեղեցին ապրիլի 23-ին: Ապրիլի 15-ին Եվրոպական խորհրդարանը լիագումար նիստում ընդունեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի վերաբերյալ բանաձևը: Այդ փաստաթուղթը հաստատում է 1987 թվականի՝ ցեղասպանությունը փաստող բանաձևի դրույթներն ու կոչ անում Թուրքիային ճանաչել այն[37]:

Թուրքական ներկայիս իշխանությունները, շարունակելով զավթողական քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում և Կիլիկյան Հայաստանում, հայկական աշխարհագրական անունների և պատմական հուշարձանների ոչնչացման ծրագիրը ծառայեցնում են ցեղասպանության ժխտմանը: Նրանց են հետևում նաև ներկայիս ադրբեջանական կեղծարարները:

1918 թ. կեսերից պանթուրքական նպատակներով ստեղծված արհեստածին «Ադրբեջան»-ում[38] (Իրանական Ատրոպատենե-Ատրպատական-Ադրբայգանից կողոպտված անունով) Հայաստանի պատմության ու տեղանունների կեղծարարությունը, հատկապես խորհրդային շրջանում, քեմալականների ու բոլշևիկների միջև 1921 թ. կնքված Մոսկվայի (մարտի 16) և Կարսի (հոկտեմբերի 13) ապօրինի պայմանագրերի և Կավբյուրոյի (հուլիսի 5) բռնի որոշման հետևանքով իրագործվում էր տասնամյակներ շարունակ՝ Նախիջևանի, Արցախի ու Ուտիքի բնիկ հայության դեմ իրականացվող բռնագաղթի, հայ մշակույթի հուշարձանների ոչնչացման և ցե-դասպան քաղաքականության հետ մեկտեղ: Պատմության կեղծա-

---

[37] http://armeniangenocide100.org/european-parliament-passes-resolution-on-armenian-genocide/

[38] Այդ կազմավորման արհեստածին լինելու մասին են վկայում կարճ ժամանակաշրջանում դրան «պատվաստված» անվանումները՝ «Արևելա-կովկասյան մուսուլմանական հանրապետություն», «թաթարական Ադրբեջան» (տե՛ս Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թ., Ե., 1997, էջ 285), «Ադրբեջանական դեմոկրատական հանրապետություն», առանց միջազգայնորեն ճանաչված սահմանների (տե՛ս Манасян А. Карабахский конфликт. Ключевые понятия и хроника, Е., 2005, с. 15): Դրանում ընդգրկվել էին եկվոր (անդրալթայան տափաստաններից XII դ. վերջից և հետագայում ներխուժած վայրենի օղուզ-թյուրքական ցեղերից առաջացած) տարրերը, որոնք Ռուսական կայսրության (XIX դ.-XX դ. սկիզբ), իսկ այնուհետև խորհրդային փաստաթղթերում պայմանականորեն կոչվում էին «թաթարներ», «կովկասյան թյուրքեր» կամ «անդրկովկասյան թաթարներ» (Большая советская энциклопедия, т. I, М., 1926, с. 641) (Կազանի և այլ տեղերի թաթարներից տարբերելու համար) և միայն 1930-1940-ական թթ. կոչվեցին «ադրբեջանցիներ» (Большая советская энциклопедия, т. 1, изд. 2, М., 1949, с. 440): Արհեստածին «Ադրբեջան»-ում թալիշների, թաթերի, ավարների, լեզգիների և այլ տեղաբնիկ ժողովուրդների դեմ առ այսօր շարունակվող բռնի ձուլման ագրեսիվ քաղաքականության մասին տե՛ս Мелик-Шахназарян Л., Хачатрян А. Этнополитика Азербайджана, Е., 2007, с. 15-25.

բարությունը նաև նպատակ ունի գաղափարապես իրագործելի դարձնել արհեստածին «Ադրբեջանին» Իրանական Ադրբեջանի բռնակցումը[39]: Սակայն Իրանական Ադրբեջանից դուրս «Ադրբեջան» անունով կազմավորում 1918 թ. կեսերից ավելի վաղ ընդհանրապես գոյություն չի ունեցել:

Հակառակ համաշխարհային պատմության տվյալների՝ 1930-ական թվականներից Թուրքիայում կատարվող կեղծարարություններին գումարվեց Քեմալ Աթաթուրքի հրահանգով քոչվոր թուրքերի համար գոյություն չունեցող «հին պատմություն» հորինելու և իրենց ներկայությունն Առաջավոր Ասիայում արհեստականորեն «հնացնելու» կեղծիքը, ուստի համաշխարհային պատմության նենգափոխմամբ, ի թիվս աշխարհի այլ երկրների, սկսեցին էլ ավելի կեղծել Հայաստանի հին և միջին դարերի պատմությունը[40]: Մյուս կողմից՝ Արցախյան ազատագրական պատերազմում (1991-1994 թթ.) պարտություն կրելուց հետո արհեստածին Ադրբեջանի ղեկավարությունը պատմության կեղծարարությունը վերածել է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դեմ ռազմամոլ քարոզչության:

Հայոց պատմության թուրք-ադրբեջանական կեղծարարությունները, որոնք հիմնված են պանթուրքական գաղափարախոսության վրա, ծառայեցվում են Հայոց ցեղասպանության հանցավոր ժխտմանը: Թուրքիան և Ադրբեջանը միլիոնավոր դոլարներ են ծախսում պատմության կեղծարարությամբ ապատեղեկատվություն տարածելու համար, սակայն, հակառակ նրանց բոլոր մոլագար ճիգերի, մտավոր ուժը իրական փաստերով առաջնորդվող ճշմարիտ պատմագիտության կողմն է: Հայ պատմաբանները բազմիցս քննադատել են թուրք-ադրբեջանական կեղծարարությունները[41]: Հատկանշական է, որ որոշ արևմտյան[42] և ռուս[43] պատմաբաններ նույնպես բացահայտել են Հայաստանի ու այլ երկրների՝ հին և միջնադարյան, ինչպես նաև նոր և նորագույն պատմության թուրք-

---

[39] *Հմմտ.* **Бартольд В. В.** *Сочинения, т. II (1). Работы по истории Кавказа и Восточной Европы, т. 2, ч. I, М., 1963, с. 703.*

[40] **Զուլալյան Մ.,** *Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմա-գրության մեջ (հին և միջին դարեր), Ե., 1995:*

[41] *«Պատմություն և մշակույթ». Ընդդեմ կեղծիքի և ոտնձգության, հիմնադրույթներ, ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի նախաձեռնած հանրապետական գիտաժողով, Ե., 2011, Հայկական լեռնաշխարհի պատմա-մշակութային ժառանգությունը: Միջազգային գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ, ԵՊՀ, ՀՀ Մշակույթի նախարարություն, Արցախի պետական համալսարան, 2012, և այլն:*

[42] **Clive Foss,** *"When Turks Civilized the World" (History Today, Vol. 55, 2005, pp. 10-16), որում հեղինակը խիստ քննադատել է թուրքական կեղծիքները:*

[43] **Бондаренко Д. Я., Вдовин А. И., Жуков А. Д.** *и др. Освещение общей истории России и народов постсоветских стран в школьных учебниках истории новых независимых государств, М., 2009, с. 5-6, 17, 24-26, 59, 69-70, 242, 244.* **Шнирельман В. А.** *Войны памяти. Мифы, идентичность и политика в Закавказье, М., 2003, с. 158-162, 202-211 և այլն:*

աղրբեջանական՝ գիտական հիմքից բացարձակապես զուրկ և սնանկ կեղծարարությունները:

Աղբյուրների հաղորդումները վկայում են Հայոց պատմության և տեղանունների քաղաքակրթական նշանակության մասին: Դրանով իսկ, օրինակ՝ համաշխարհային ջրհեղեղից մարդկության փրկության Սրբազան լեռան Արարատ անունը այլափոխելով՝ թուրք կեղծարարները ոտնձգում են ոչ միայն Հայոց, այլև համաշխարհային պատմության և քաղաքակրթական արժեհամակարգի դեմ, որը թուրք կեղծարարների հանցավորության ևս մի վկայություն է: Ջորջթաունի համալսարանի պրոֆեսոր Քլայվ Ֆոսը նշում է, որ թուրքական կառավարությունը «պարբերաբար փոփոխում է գյուղերի անվանումները… Ցանկացած անուն, որ չունի թուրքերեն իմաստ կամ չի հնչում թուրքերեն, անկախ դրա ծագումից, փոխարինվում է Անկարայում գտնվող բյուրոյի կողմից նախատեսված սովորական անունով, առանց հարգանքի տեղական պայմանների կամ ավանդույթների նկատմամբ»[44]:

Թուրք կեղծարարները Արևմտյան Հայաստան *հասկացության փոխարեն սխալ կերպով օգտագործում են «Արևելյան Անատոլիա» եզրույթը, իսկ աղրբեջանական կեղծարարները* Արևելյան Հայաստան *հասկացության փոխարեն հորինում են «Արևմտյան Աղրբեջան»[45] արտահայտությունը և հատկապես Արցախի, Ուտիքի և հարակից տարածքների նկատմամբ սխալ կիրառում «Ալբանիա»[46] անվանումը: Սակայն, ըստ պատմական աղբյուրների և պատմագիտական ու աշխարհագրական գրականության, «Անատոլիան» իր բոլոր մասերով (հյուսիսային, հարավային, արևելյան և արևմտյան) համապատասխանում է Փոքր Ասիային, որը գտնվում է Հայկական լեռնաշխարհից արևմուտք[47], իսկ «Ալբանիան», հայերեն* (աղու)

---

[44] **Clive Foss,** *նշվ. աշխ., էջ 10-16:*

[45] *Խելացնորության աստիճանի հասնող «Արևմտյան Աղրբեջանի հուշար-ձանները» հակագիտական քարոզչական «գրքում» զետեղված կեղծիք-քարտեզը վերնագրված է «Արևմտյան Աղրբեջանի՝ ներկայումս «Հայաստանի Հանրապետություն», քարտեզ»՝ թուրքերի և օղուզների հայրենիքը» (***Alakbarli A.** *Les Monuments d'Azerbaijan d'Ouest, Baku, 2007): Ռազմամոլ՝պետական մակարդակի բարձրացված այս թշնամական գառանցանքը հովանավորել է Աղրբեջանի Հանրապետության «Մշակույթի և տուրիզմի մինիստրությունը»: Ռ. Գալչյանը այս «գիրքը» անվանել է «աղրբեջանական ցնորքների նորագույն և ծայրահեղ դեպքերից մեկը» (***Galichian R.** *The Invention of History, London-Yerevan, 2009, pp. 5-6):*

[46] **Мамедова Ф.** *Кавказская Албания и албаны, Баку, 2005, с. 278, 281 և այլն:*

[47] **Зограбян Л. Н. Орография Армянского нагорья**., *Е., 1979, с. 14-15, The Encyclopedia of Word History: Ancient, Medieval and Modern, sixth edition, Boston, 2001, p. 193. http://shora.tabriz.ir/Uploads/83/cms/user/File/657/E_Book/History/The%20Encyclopedia%20of%20World%20History.pdf*

ծագմամբ[48] ՝ «բուն Աղուանք» (Մեծ Հայքից արևելք՝ Կուրի ձախ ափին) անվան հիշատակությունն է անտիկ հունա-լատինական աղբյուրներում[49]:

Բաքվի կողմից պատմության կեղծարարությունը վտանգներ է ստեղծում տարածաշրջանում: Իրանցի մասնագետները տասնամյակներ շարունակ բողոքում են, որ Կովկասի՝ Կուրի ձախափնյակում գտնվող շրջանը երբեք «Ադրբեջան» չի կոչվել, այն այլ անուն է ունեցել[50] (օրինակ՝ բուն Աղուանք, իսկ հետագայում՝ Շաքի, Շիրվան և այլն): Պաշտոնական Թեհրանում նաև անհանգստացած են «երկու Ադրբեջանների» «միավորման» մասին պարբերաբար հնչող կոչերից[51], այսինքն, Ատրպատականից հյուսիս գոյություն չունեցած «Ադրբեջանի»[52] և Ատրպատականի՝ իբրև թե «միավորումից», որը Բաքվի և նրա հովանավորների զավթողական նկրտումների արտահայտությունն է:

Իսկ իրականում, պատմականորեն, սահմանը Մեծ Հայքի և բուն Աղուանքի միջև անցնում էր Կուր գետով, իսկ Երասխի (Արաքս) և Կուրի ստորին հոսանքներից հարավ գտնվում էր Փայտակարանը՝ Մեծ Հայքի հարավարևելյան նահանգը, որն արևմուտքում սկսվում էր Վասպուրականից, արևելքում ձգվում էր մինչև Կասպից ծով, իսկ հարավում սահմանակից էր Իրանի հյուսիս-արևմուտքում գտնվող Ատրպատականին[53]:

---

[48] **Մովսէս Խորենացի,** *էջ 112-113:*

[49] **Акопян А.** *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Е., 1987, с. 9-35.*

[50] **Bayat K.** *Storm over the Caucasus, Tehran, 2002 (in Persian), pp. 66-67,* **Galichian R.** *The Invention of History, London/Yerevan, 2010, p. 7.*

[51] **Michael Croissant P.** *The Armenia-Azerbaijan Conflict, Greenwood, 1998, p. 61.*

[52] *Թուրքական ցեղասպան քաղաքականության բովերում խմորված և 1918 թ. կեսին Իրանական Ադրբեջանից (Ատրպատական) կողոպտած անվանումով «ստեղծվել» էր պանթուրքիզմին ծառայող մերձկասպյան, արհեստածին «Ադրբեջան»-ը: Հայաստանի Հանրապետության վարչապետ և արտգործնախարար Ա. Խատիսյանը 1919 թ. երկրորդ կեսին այդ մասին Փարիզի վեհաժողովին գրել է. «Ադրբեջանի կառավարության կողմից Ղարաբաղի նվաճման ծրագիրը նպատակ ունի պանթուրանական ձգտումների իրականացումը, որով աշխատում է միացնել Ադրբեջանը Ղարաբաղի ու Նախիջևանի վրայով Թուրքիային ու Պարսկաստանին, այսպիսով ստեղծել մուսուլմանական կոմպակտ զանգված, կտրել Արևելյան Հայաստանն Արևմտյան Հայաստանից՝ ոչնչացնելով Միացյալ Հայաստանի ստեղծումը ...Հայաստանի կառավարությունը... հայտնում է մի անգամ ևս իր անդրդվելի վստահությունը..., որ Հաշտարար կոնֆերանսն իր մասնավոր և բարեհաճ ուշադրության կառնի Հայաստանի Հանրապետության համար այնքան կենսական եղող Ղարաբաղի հարցը» (Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), Ե., 2001, էջ 730-731): Թուրքական և մուսավաթական՝ թյուրք-թաթար հրոսակները իրագործեցին հայերի կոտորածները Բաքվում (15-17.IX.1918 թ.) և Շուշիում (Արցախ) (23.III.1920 թ.):*

[53] *Տե՛ս* **Երեմյան Ս. Տ.,** *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, էջ 38, 109:*

Արևմտյան Հայաստանում, Կիլիկիյան Հայաստանում և Արևելյան Հայաստանի Նախիջևան, Գողթն, Հյուսիսային Արցախ[54], Ուտիք գավառներում ու նահանգներում հայկական պատմական հուշարձանների (եկեղեցիներ և մշակութային-կրթական ու շատ այլ կառույցներ) ավերածությունների, թալանի և ոչնչացման հետ մեկտեղ շարունակվում են հայկական տեղանունների աղճատումները և ոչնչացումը: 2005 թ. ոչնչացվեց հայկական խաչքարերի (նախորդ տասնամյակներում ավերված տասը հազարից մնացած) վերջին խումբը՝ Հին Ջուղայի հայկական գերեզմանատանը (հին հայկական Գողթն գավառում, Նախիջևան գավառից հարավ-արևելք) հանցավոր ադրբեջանական իշխանությունների հրահանգով: Այն, որ այդ ավերածությունը հրահանգավորված էր Ադրբեջանի իշխանությունների կողմից, վկայում է ոչնչացված խաչքարերի տեղում հրաձգարանի կառուցումը[55]:

Զավեշտալի փաստ է, որ Նախիջևանի հարավում՝ Գողթն գավառում հայկական գերեզմանոցի խաչքարերի վերջնական ավերածությունից մեկ տարի անց՝ 2006 թ. սկսվում է Փենսիլվանիայի համալսարանի և Ադրբեջանի ակադեմիայի միջև աղճատված անվանումով՝ "The Naxçivan Archaeological Project" "հետազոտու-թյունների ու պեղումների" առաջին միացյալ "ծրագրի" իրագործումը, որը հայկական պատմական ժառանգության վերացման հանցագործ շարունակությունն է, քանզի խոսք անգամ չի ասվում, որ պեղումները կատարվում են Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Նախիջևան գավառում[56], և բնական է, որ հնավայրերը հայկական պատկանելություն ունեն[57]: Իսկ «պեղումների» նյութերում օգտագործվում են օտարամուտ տեղանուններ[58]՝ նենգափոխելով հինավուրց Նախիջևանի իրական պատմությունը:

Արևմտյան Հայաստանում հայկական մշակութային ժառանգության ծրագրավորված ոչնչացման նոր փաստերից են Կարսի Ս. Առաքելոց եկեղեցու բռնի վերափոխումը մզկիթի, հին հայկական տների ավերումը Մուշում (Տարոն գավառ, 2013 թ.) թուրքական հանցավոր իշխանությունների հրահանգով և այլն:

---

[54] **Կարապետյան Ս.,** *Հյուսիսային Արցախ, Ե., 2004:* **Կիրակոսյան Լ.,** *Մշակութային եղեռն (Արցախի ճարտարապետական հուշարձանների օրինակով) http://www.armenianreligion.am/images/menus/751/Kirakosyan_L.pdf*

[55] **Julfa,** *The Annihilation of the Armenian Cemetery by Nakhijevan's Azerbaijani Authorities, Beirut, 2006.*

[56] **Երեմյան Ս. Տ.,** *նշվ. աշխ., էջ 108-109:*

[57] *Ժամանակին այստեղ կատարված հնագիտական պեղումների իրական պատկերի մասին, տե՛ս, օրինակ,* **Այվազյան Ա. Ա.,** *Արբա և Ճահուկ բերդերը (Լրաբեր, N 9, 1976, էջ 87-95):*

[58] http://www.penn.museum/sites/oglanqala/website/2006%20intro.html
http://www.penn.museum/sites/oglanqala/website/2006%20survey.html

Թուրք-ադրբեջանական բոլոր կեղծարարությունները ջախջախվում են՝ բախվելով պատմական սկզբնաղբյուրների ամրակուռ փաստագրական նյութերին, որոնք վկայում են, որ հայերը Հայաստանի (ամբողջ Հայկական լեռնաշխարհը) տեղաբնիկ ազգն են: Հակահայկական թշնամանքը և ագրեսիվությունը բնորոշ են նաև ներկայիս ադրբեջանական «կրթական համակարգին» ու «պատմագրությանը», քանզի դրանք, անտեսելով պատմական աղբյուրները, զբաղված են պատմության կեղծարարությամբ[59]: Պատմության կեղծարարության «պետպատվերի» դրսևորումներից են Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիևի ճառերը: Ադրբեջանի ակադեմիայի (26.04.2011 թ.) տարեկան ընդհանուր ժողովի ժամանակ «պատմաբան ակադեմիկոսներին» նա հրահանգել է ավելացնել «պատկառելի գիտական աշխատությունների թիվը այն մասին, որ Լեռնային Ղարաբաղը հին ու նախաբնակ ադրբեջանական հող է»[60]: Ի կատարումն այդ՝ զառանցանքի հասնող հրահանգի ադրբեջանցի «ակադեմիկոսները» շարունակեցին հսկայական քանակությամբ կեղծիքներ հրապարակել, և այդ կարգով ամբողջապես կեղծվում են «պատմության» դասագրքերը Ադրբեջանում, որոնց հիման վրա «դաստիարակվում» են մարդատյաց և գիշատիչ սաֆարովները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ու Արցախի Հանրապետության սահմանները խախտող նրանց մեղսակիցները, որոնց, սակայն, ջախջախիչ հարված են հասցնում Հայրենիքին անմնացորդ նվիրված քաջարի հայորդի սահմանապահները, որոնց գաղափարական զենքը՝ հայրենաճանաչողության, պատմական փաստերի և նախնյաց քաջագործություն-ների վրա հիմնված հայրենասիրությունն է: Պատ-մահայր Մովսես Խորենացին նախնյաց քաջագործությունների մասին մեծ գոհունակությամբ ու խանդավառությամբ գրել է. «Միրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան - Հայկ, Արամ, Տիգրան, քանզի ըստ քաջացն՝ ազգք քաջք»[61]:

Այսպիսով, Հայոց ցեղասպանությունը դատապարտելու և Արևմտյան Հայաստանի ու Կիլիկյան Հայաստանի՝ Հայոց հայրենի հողերի

---

[59] *Տե՛ս օրինակ՝* **Алиев В., Юсифов Ю., Бабаев И.** *и др. История Азербайджана. Учебник для 6-го класса, Баку, 2002, с. 4 և այլն:*

[60] *Դատապարտելով Ի. Ալիևի կեղծարարությունները՝ Վ. Զախարովը եզրակացրել է. «Ամոթ է կարդալ այս պատմական անհեթեթությունը... Ալիևը փորձում է հիմնավորել ադրբեջանական կողմի հավակնությունները ոչ միայն Ղարաբաղի, այլ նաև բուն Հայաստանի Հանրապետության տարածքի նկատմամբ»: Միևնույն ժամանակ, նշելով Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ռ. Մեխտիևի տխրահռչակ հոդվածի անհեթեթությունները՝ Վ. Զախարովը նշել է. «...Ոչ մի հեղինակավոր արևմտյան գիտական կենտրոնում չեն կարդում նման գրականություն: Յանկացած ֆորումի մասնակիցներին հանձնված Բաքվի հրատարակությունների նմուշները մնում են հյուրանոցային համարներում կամ էլ հայտնվում են աղբարկղներում» (Нагорно-Карабахской Республике 20 лет, ред. проф. В. А. Захаров. М., 2011, с. 4, 53-58, 130-150):*

[61] **Մովսէս Խորենացի,** *էջ 85:*

պահանջատիրության գործում անհերքելի, անժխտելի վկայություններն են 1,5 միլիոն հայերի ցեղասպանությունը և հայկական պատմական հուշարձանների ոչնչացումը Թուրքիայի կողմից՝ ցեղասպան քաղաքականության ծրագրի իրագործման հետևանքով[62]*:*

Հայոց պատմաքաղաքակրթական ամբողջական ժառանգության՝ ազգային անվտանգության հիմքի պաշտպանությունն ունի կենսական նշանակություն, որի ազգապետական երաշխավորներն են Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը:

ФАКТ ИСТОРИКО-ЦИВИЛИЗАЦИОННОЙ ЦЕЛОСТНОСТИ АРМЕНИИ ПРОТИВ ТУРЕЦКО-АЗЕРБАЙДЖАНСКИХ ФАЛЬСИФИКАЦИЙ

ДАНИЕЛЯН Э. Л.

Резюме

В естественно-исторической среде Армянского нагорья история более чем пятитысячелетней армянской государственности и цивилизационных ценнос-тей засвидетельствована археологическими и архитектурными памятниками, клинописными надписями, античными и средневековыми письменными источниками и т.д.

Турецкие фальсификации истории направлены на отрицание геноцида армян и уничтожение и присвоение захваченных путем геноцида и незаконных аннексий армянских территорий и культурного наследия. Однако усилия турецко-азербайджанских фальсификаторов обречены на провал, ибо клас-сическая историческая наука не терпит лжи и искажений.

Геноцид 1,5 млн армян и уничтожение армянских исторических памятников являются неоспоримым фактом в осуждении геноцида армян как преступления против человечества, а также в предъявлении справедливых территориальных требований, а именно – возврата Западной Армении и Киликийской Армении. Защита армянского историко-цивилизационного наследия – основа национальной безопасности, гарантом которой являются Республика Армения и Республика Арцах.

THE FACT OF HISTORICAL AND CIVILIZATIONAL ENTITY OF ARMENIA AGAINST THE TURKISH-AZERBAIJANI FALSIFICATIONS

---

[62] **Барсегов Ю.** *Геноцид армян – преступление против человечества (О правомерности термина и юридической квалификации) (Լրաբեր, 1987, № 4, էջ 25-39).*

E. DANIELYAN

Abstract

In the natural and historical environment of the Armenian Highland the history of more than five millennia old Armenian statehood and civilizational values is attested to by the archaeological data, cuneiform inscriptions, ancient and medieval written sources and historical monuments. Turkish falsifications of history are directed at the denial of the Armenian Genocide and destruction and appropriation of the Armenian territories and cultural heritage as the result of committing genocide and illegal annexations. But the efforts of the Turkish- Azerbaijani falsifiers are doomed to failure, because classical historical science based on centuries-old traditions does not accept lies and destortions.

The genocide of 1,5 million Armenians and annihilation of the Armenian historical monuments are undeniable evidence as for the condemnation of the Armenian Genocide – the crime against humanity, as well as for just territorial demands – the return of Western Armenia and Cilician Armenia. The protection of the Armenian historical and civilizational heritage - the basis of national security, is of vital importance and its guarantors are the Republic of Armenia and the Artsakh Republic.